Տ. ՇԱՂԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 հուլիսի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն»
(Ա. Կորնթ. Զ. 19):

Սիրելիներ՛, քիչ առաջ Ճաշու ընթերցվածի ժամանակ հնչեցված Պողոս առաքյալի հռետորական այս հարցը լի է փագեւապով եւ անհանգստությամբ: Պողոս առաքյալի Կորնթացիներին ուղղված նամակն ամենապարբեր հարցեր է շոշափում: Եւ ինչպես, սիրելի՛ ժողովուրդ, դուք տեսաք Ճաշու ընթերցվածից, այդ հարցերն ամենապարբեր բնույթի էին՝ ամուսնության, սեռականության, ուտելիքի, հասարակության մեջ մարդու տեղի ու դերի եւ այլն: Ահա այս բոլոր հարցերը քննարկելով՝ Պողոս առաքյալը փորձում է սահմանել այն հիմնական չափանիշները, տալ այն սահմանումները, որոնցով քրիստոնյան այն ժամանակ՝ քրիստոնեության տարածման Ա. դարում, պետք է ապրեր Հռոմեական կայսրության մեջ եւ փորձեր փոխել այդ հասարակության մեջ տարածված սանձարձակ բարքերը:

Այս ամենից հետո ահա Պողոս առաքյալը հնչեցնում է իր հարցը. «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, եւ որն ստացել եք Աստծուց... Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա. Կորնթ. Զ. 19-20):

Նախքան այս առաքելական պատգամի իմաստին մեր տկար մտքով անդրադառնալը, փորձենք հասկանալ, թե ինչ էր ուզում ասել Պողոս առաքյալն իր բավական երկար նամակի այս փոքր հատվածով:

Այն ժամանակվա հասարակության, հրեական եւ հեթանոսական մտածողության մեջ տաճարը շատ կարեւոր վայր էր: Տաճարն էր սահմանում ժողովրդի բարոյականության սահմանները, տաճարի մեջ էր ժողովուրդն ստանում հեթանոս աստվածների պատգամը, եւ շատ հաճախ հենց տաճարի մեջ էին կատարվում այն բոլոր անբարո քայլերը, դրսեւորումները, որոնք այդքան խստորեն քննադատում է Պողոս առաքյալը: Եւ ահա Կորնթոս քաղաքում հեթանոսական չաստվածուհուն՝ Աֆրոդիտեին ձոնված այդպիսի մի նշանավոր տաճար կար, որին հենց Պողոս առաքյալը հակադրում է քրիստոնյայի ներսում եղած հոգեւոր տաճարին: Եւ այսքանից հետո ասում է առաքյալը. «Երբ դուք ընդունել եք Սուրբ Հոգին, երբ ձեր ներսում կա հոգեւոր տաճար, մի՞թե դուք չեք գիտակցում, որ ձեր մարմիններն այդ տաճարի բնակավայր են»: Բնականաբար, Պողոս առաք-

յալի այս խոսքերը չեն կորցնում իրենց արժեքը, որովհետեւ մենք միշտ եւ ամեն կիրակի խորհրդածում ենք այդ խոսքերի, նրա նամակների, արտահայտած մտքերի ու պատգամների շուրջ:

Սրբազան պատմությունը՝ Աստվածաշնչի ժամանակագրությունը մեզ տաճարի երեք օրինակ է տալիս՝ հինկտակարանյան տաճարը, որ կառուցվեց Դավթի որդու՝ Սողոմոնի կողմից, Հիսուս Քրիստոս Ինքն իբրեւ Տաճար, ինչպես Նա վկայեց Հովհաննու եւ Մատթեոսի ավետարաններում եւ, վերջապես, քրիստոնյան ինքը որպես տաճար, ինչպես քիչ առաջ լսեցինք Պողոս առաքյալի նամակում: Այս երեք խորհուրդների մեջ մեզ համար բացահայտվում է փրկագործության այն մեծ խորհուրդը, այն շնորհը, որ Տերը տալիս է մեզ, եւ որի համար Պողոս առաքյալն ասում է. «Մեծ գնով գնվեցիք եւ դուք ձեր տերը չեք, այլ դուք պատկանում եք Աստծուն»: Նրանք ձեզանից, ովքեր հաճախ թերթում են Հին Կտակարանը գիտեն, որ հեթանոսական միջավայրում Սողոմոնի կառուցած տաճարը միակ կենդանի Աստծո հավատի վկայությունն էր, բայց այն քանդվեց եւ երբ դրա փոխարեն կառուցվեց երկրորդ տաճարը, որ կանգուն էր նաեւ Հիսուսի ժամանակ, Աստծո Որդին այդ տաճարի մասին ասաց. «Աստծու տաճարը կարող եմ քանդել եւ երեք օրում շինել» (Մատթ. ԻՁ. 61)՝ ակնարկելով իր մարմինը, որովհետեւ Նա թաղվելու էր եւ երեք օր հետո հարություն էր առնելու: Այս մեծագույն բացատրությունը, խորհուրդը, որ տվեց Քրիստոս Իր աշակերտներին, հետագայում դարձավ Եկեղեցու մեծագույն կրոնական ու դավանական կետերից մեկը: Քիչ առաջ «Հաւատամքի» ժամանակ ամենքս գրեթե նույն իմաստով կրկնեցինք այդ բառերը. «Գալոց է նովին մարմնովն՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»: Այն մարմինը, որ Քրիստոս ստացավ Ս. Աստվածածնից եւ որով հարություն առավ, այդ նույն մարմնով, մարդկային դեմքով եւ անձնավորությամբ է աշխարհի վերջում դատելու հավատացյալներին եւ անհավատներին: Եւ, ի վերջո, Հարությունից եւ Հոգեգալստից հետո, երբ առաքյալներն ստացան Ս. Հոգու շնորհը, նրանց հետ նաեւ ամեն քրիստոնյա ստացավ Ս. Հոգու տաճար լինելու պարգեւը եւ շնորհը: Մեծագույն խորհուրդ, որ Տերը շնորհեց քրիստոնյաներիս եւ որով պսակվեց քրիստոնեական փրկագործության ամբողջ ընթացքը: Այս մեծ խորհուրդի առաջ ամենքս, բնականաբար, գլուխ ենք խոնարհում, որովհետեւ այդ խորհուրդի՝ Ս. Հոգու տաճար կամ բնակարան լինելու հիմնական առաքելությամբ է, որ մենք հավաքվում ենք Ս. Հաղորդության խորհուրդի շուրջ, երբեմն մեր անձնական աղոթքի, մտածումի մեջ փորձում ենք միանալ Աստծուն:

Քույրե՛ր եւ եղբայրնե՛ր, ես հիմա էլ համարձակվում եմ Պողոս առաքյալի հետեւողությամբ ինքներս մեզ հարց տալու. «Չգիտե՞նք, մի՞թե, որ մենք Ս. Հոգու տաճար ենք, եւ որ կոչված ենք մեր մեջ Աստծուն փառաբանելու: Չգիտե՞նք, մի՞թե, որ մեր առաքելությունն է այս երկրի վրա Տիրոջ կենդանի մարմնի մաս կազմելը եւ այդպիսով փրկվելը»:

Այսօր հատկապես մեր հասարակության մեջ, սիրելինե՛ր, այս մտածումը մեծապես պակասում է: Շատ մարդկանց համար ներքին, հոգեւոր պաշտամունքը եւ փորձառությունը պարզապես կենցաղային, սովորական երեւույթ է դարձել, եւ շատ հաճախ մարդիկ չեն էլ անդրադառնում, որ դրանով կորցնում են Եկեղեցու հետ, Եկեղեցու անդամ

դառնալու մեծագույն եւ կարեւորագույն սկզբունքը: Եւ շատ շատերի մոտ այն պարզապես կա՛մ բացակայում է, կա՛մ ընդհանրապես անդրադարձ չկա այդ ներքին, հոգեւոր պաշտպանությանը: Դժբախտաբար ոչ միայն Հայաստանում, ոչ միայն հայ հասարակության մեջ, այլեւ ամբողջ աշխարհում հոգեւոր-բարոյական այս արժեքների հեւզընթացը պայմանավորում է նաեւ շատ ու շատ ասպվածաշնչյան պատգամների ոչ ճիշտ եւ սխալ մեկնաբանումը: Երանի՜ թե այսօր մեր հասարակության մեջ Տիրոջ տաճար լինելու մղումը, ձգտումը մեկընդմիշտ մխված լիներ մեր հասարակության մտքի մեջ: Գիտե՞ք, որ կսկսեին ավելի մաքուր օդ շնչել, մարդիկ կսկսեին իրենք իրենց զգալ Աստծո տաճար եւ անդրադառնալ, որ ամեն մի մեղք, ամեն մի վատ, չար արարք «տրտմեցնելու է Ս. Հոգուն», ինչպես ասում է Պողոս առաքյալը: Գիտե՞ք, որ մարդիկ այլեւս կդադարեին թշնամանքով եւ կասկածանքով նայելու իրենց նմանին՝ մարդուն, որ նաեւ իր նման Ս. Հոգու տաճարի կրողն է:

Այսօր մեր հասարակության մեջ Եկեղեցու անդամ եւ հավատացյալ լինելը շատ հարաբերական երեւույթ է դարձել: Շատ հաճախ մարդիկ մտածում են, որ Եկեղեցու անդամը պարզապես մեկն է, ով մտահոգվում է Եկեղեցու կարիքներով: Մի մասն էլ մեկնաբանում է, որ մտահոգված է Եկեղեցու կյանքում տիրող անհարթություններով, ոչ պատշաճ դրսեւորումներով, եւ նեղվում է Եկեղեցին փրկելու այդ ոչ պատշաճ դրսեւորումներից:

Սիրելի՜ հավատացյալ, ամենքս գիտենք, որ փրկությունը, ինչպես Եկեղեցու հայրերն են քարոզում, սկսվում է նախ եւ առաջ ինքդ քեզանից: Եթե դու չես կարողանում ինքդ քեզ փրկել, ինքդ քո ներքին անհարթությունները, ներքին չարությունը եւ կուտակված մեղքը մարդկանց հետ հարաբերությունների արդյունքում պարպել, երբեք չես կարող փրկել նույնիսկ մեկ հոգու, ուր մնաց թե ողջ Եկեղեցին:

Մի հետաքրքիր միջնադարյան առակ կա, երբ աշխարհը փլվում է եւ ամեն ոք փախչում է ապաստան գտնելու, եւ ահա արտույտն իր տկար, վտիտ ոտքերը վերեւ է պարզում, եւ ամենքն սկսում են ծիծաղել. «Ինչ ես անում, ո՛վ հիմար, որովհետեւ երկինքն ահա փուլ է գալու»: Եւ իմաստուն թռչունի պատասխանն է. « Ես իմ բաժին երկինքն եմ փորձելու պահել իմ ոտքերով»:

Մենք ամենքս այսօր Եկեղեցում հավաքված շնորհ ունենք, հնարավորություն ունենք կենդանի վեմեր, Աստծո կենդանի Եկեղեցու անդամներ լինելու: Ամեն բան կանցնի այս կյանքում, կանցնեն իրենց ճոխությամբ «բելիարյան տաճարները», ինչպես ասում է Պողոս առաքյալը, կանցնեն իրենց պերճությամբ եւ հռետորությամբ պարծեցող բոլոր ճարտասանները, կանցնեն իրենց իշխանությամբ հոխորտացողները, միգուցե ասպղերն ու արեգակը մի օր մաշվեն եւ տիեզերքում այլեւս չլինեն, բայց կա եւ կմնա Աստծո կենդանի Եկեղեցին, որ ինչպես առաքյալն է ասում. «...է սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» (Ա. Տիմ. Գ. 14): Ձեզանից շատերը սովորություն եւ բարեպաշտական իղձ, ցանկություն ունեն երբեմն-երբեմն հինավուրց եկեղեցիներ այցելելու, նրանց սրբազան պատերի տակ երբեմն աղոթքներ մրմնջալու: Իմ խորհուրդն է ձեզ՝ փորձե՛ք մի օր այդ պատերի քարերի մեջ տեսնելու Հովհաննու Ավետարանի այն նշանավոր տեսիլքը, երբ

Նոր Երուսաղեմի պատերը ոչ թե քարերով, նյութով էին կառուցված, այլ առաքյալներով եւ մարգարեներով՝ հավատացյալ ու լուսավորված մարդկանցով: Ահա, տեսե՛ք, այդ պատերը ձեր ներքին մարդուն, ձեր հոգեւոր մարդուն ի՞նչ պատգամ կտան: Արդյոք ձեզ չե՞ն փոխանցի այն լույսը, որ մեր Եկեղեցու հայրերը, մեր Եկեղեցու ուսուցիչներն ու առաջնորդը թողել են այդ պատերի քարերի մեջ: Տեսե՛ք, ձեր սրտին չի՞ խոսի այդ սրբազան տաճարը հեստեյալ աղոթքով. «Տո՛ւր մեզ, Տե՛ր, շնորհն ու պարգեւը, քո մարմնի լուսավոր անդամը դառնալու, տա՛ր մեզ, Տե՛ր, Քո մարմնի տաճարի հեռավոր անկյունները, բա՛ց մեզ, Տե՛ր, մեր մարմնի բոլոր դռները եւ տո՛ւր մեզ, Տե՛ր, խորան եւ աղոթատեղի քո Ս. Հոգին ընդունելու»:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, ինչպես արդեն ասացի՝ մենք կենդանի տաճար ենք: Մեր ներսում է, որ պիտի փորձենք նախ նորոգել եւ վերականգնել այն խարխլված, կորսված հարաբերությունը, որ ունենք Աստծո հետ: Եւ ուրեմն՝ թող մեր ներսում մեր աղոթքը դառնա խորան, մեր սերը՝ զմբեթ, մեր հույսը՝ սյուն, մեր հավատքը՝ հիմք, իսկ մեր սիրտը՝ խորան, որպեսզի կարողանանք ընդունել Ս. Հոգին եւ փառաբանել Աստծուն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: